

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի տնտեսական գազեր:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրը 3 ման. թ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրող կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթում հրատարակելու կընդունվին մասնատու յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմբագրատանը:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութիւնի կարգադրութիւնները: Տնտեսական ժողովրդականութիւնները: Տէրութիւնի բանկի բաժանումը Թիֆլիսում: Գաղափարական: Տարբեր: Թէ ինչ է ոսկին ու արծաթը փող: Տարբեր դրոշմ կողմնակից էս վերջին ժամանակներում: Առհասարակ դրամական շահանակութիւնը եւ մեր դրամականութիւնը 1865 թին: Մասնատու տնտեսականութիւններ: Առհասարակ տնտեսականութիւններ:

ՇԱ.Ռ.Ա.ՋԱՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Էս տարի Փետրվարի 27 Հիւսիս-Արեւելեան պրովինցիայի մարզային վերահսկող Կառավարութիւնի Աստուր ՀԱՍԱՆ—ՋԱԼԱ—ԼԵԱՆՅՈՒՄ տապալ Նաղաբնի Սովետիկի աստիճան:

Մի և նոյն թիւն արձակվեցաւ Խնտեղանտի կառավարութիւնից Նաղաբնի Սովետիկ ՀԱՂԱՌԱՅԱԹԵԱՆՅՈՒՄ:

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԲԱՆԿԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ (ՕՏԴԵԼՆԵՒԻՆ) ԹԻՖԼԻՍՈՒՄԸ:

Թիֆլիսում Մեծ Իշխան Փոխարքայի աշխատութեանով բացվեցաւ էս տարի Տէրութեան բանկի բաժանումը: Էդ բանկի բաժանումը կըլինի Կովկասեան Պրիկազումը և էս հետեւել դործերը կկատարէ:

Ա. Թղթադրամերի (կրեդիտի բիլետների) փոխութիւնը:

Բ. Ներկայացրած կուպոններով շահ տալը:

Գ. Թէ դրամատարնից և թէ մասնատու մարդկերանից դրամներ ստանալը փոխանցելու (պրեկլուդի) համար:

Դ. Գումարներ ընդունելը:

Ե. Մասնատու մարդկանցից առանց ժամանակ որոշելու դրամներ ընդունելը շահեցնելու համար:

Ձ. Վեց ամսով կուպոնների շահի դուրս դալը:

Ի. Փողի փոխ տալը շահ բերող թղթերի

դրամ վեր առնելով: Միայն չեն ընդունվել դրամի համար Կովկասեան Պրիկազի որոշած ժամանակով վեր առած փողերի տոմսակները:

Բ. Ժամանակաւոր դրամաթղթերի հատուցանելու փողերի ստանալը:

Թ. Բանկի 50/0 և ուրիշ դրամաթղթերի առնելը և ծախելը:

Ժ. Ուրիշ դործակալական (կոմիսիօնի) դործերը, որ հարկաւոր կհամարէ բանկի բաժանումը:

և Ի. Եթէ հարկաւոր լինի, համապատասխան վերջինի (մուրհակի) առնելը շահը կտրեւորվի:

ՏՈՐԳԵՐ:

Կովկասեան Խնտեղանտի կառավարութեանը էս մայիսի 30-ին կըլինի 1.) Կովկասի փոխարքայի պալատի համար 500 սաժեն փէտ 2.) Կովկասեան Շտաբի համար 280 սաժեն փէտ 3.) Պողեւոյ Առդիտուրեանտի համար 10 սաժեն 2 1/4 արշին փէտ և 4.) Թիֆլիսի Ժանդարմի Կոմանդի համար 11 սաժեն և 1 1/4 արշին փէտ, ընդ ամենը 802 սաժեն և 1/2 արշին փէտ հասցնելու տորդը 1867 թւի համար:

Թիֆլիսի դաւառական կառավարութեանը էս տարի օգոստոսի 16-ին նշանակած է Զաքարթաւ օկրուգումը գտնված չորս փողի ստանցիլի 1867 թւի յունվարի 1-ից մինչև 1870 թւի յունվարի մէկը պահելու տորդը:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ:

Պետերբուրգի Սենատում էս տարի մայիսի 3-ին նշանակած էին քննելու համար ուրիշ դործերի հետ և մեր Կովկասին վերաբերեալ դործեր:

Մեծելոյ Դեպարտամենտում 1.) Թիֆլիսի քաղաքային Մեհրաբեանցի և Քաչարեանցի փողի հաշիւների դործը. 2.) Էլիօղով

քահանայի Թիֆլիսի քաղաքային Թանդոյեանցի հետ ունեցած դործը դրամադրի (դակլադնոյի) մասին. 3.) Ախալցխայի բնակիչ Վարդանեանցի և Աւետիսեանցի դործը կալուածքի մասին. 4.) Քուլթայի բնակիչ Բաղդո—Կուրուլի—Շվիլի Թիֆլիսի բնակիչ Արարատեանցի հետ ունեցած դործը փողի հաշիւների մասին. 5.) Իշխան Նաղաբնիների Թիֆլիսի քաղաքային Ախալեանցի հետ ունեցած դործը փողի հաշիւների մասին. և 6.) Թիֆլիսի պատուաւոր քաղաքային Զաքարեբեանցի Գուբերնսկի Սեկրետար Տոմաշչեւի հետ ունեցած դործը փողի հաշիւների մասին:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մայիսի 21—1866.

Ոչ մէկ պատմութիւն աշխարհիս վրայ կարելի է, որ էնքան տեղը ճշմարիտ չլինի, ինչքան էն բանը, որ ամեն ազգեր ամեն ժամանակ փողի հարկաւորութիւն են ունեցել: Ինչպէս որ երկիցյեան էր, Էդուց էնպէս չի լինիլ—էս է ժամանակի և յառաջդիմութեան օրէնքը: Առաջվայ ժամանակները հասարակական անտեսութեան մէջ փողը (ոսկին, արծաթը) նշանակութիւն ունէր, հիմի փողը առ փողը մենք կարողացել ենք առանց էդ մետաղների էլ առուտուր անել, դանդաղան թղթերի միջնորդութեամբ: Կղայ ժամանակ, որ ոսկին և արծաթը բոլորովին էլ չի դործ ածվիլ փողի պէս: Փող ասելով ի հարկէ հասկանում ենք միայն ոսկին և արծաթը, իսկ թղթէ փողը (կրեդիտի բիլետները կամ ասիդնայիան) և բանկերի դուրս տված դանդաղան տոմսակները (սերիք և այլն) փողի նշաններ և դործ են ածվում միայն փողի տեղ: Էդ դանդաղանութիւնը հարկաւոր է միայն պահել:

Գաղղիացի մէկ երեւելի բանկիր (ղարաֆ) բանկիրի վրայ խօսելիս ասում է, քանակների նպատակն է հետապնդել առուտուրը և ոչնչացնել ոսկու և արծաթի նշանակութիւնը վաճառականութենի մէջ: Ոսկին բարբարոսական դէմք է առուտուրի մէջը: Քանի որ մէկ երկիր չափ բերքեր է մշակում գործարանների միջոցով, էնքան քիչ փող է էնտեղ հարկաւոր: Հիմի ամենամեծ առուտուրները գրաղղութիւնով են լինում առանց փողի—բարաթի, վիկսիլի և ուրիշ էս տեսակ միջոցներով: Ոսկին միայն յետագէմ մարդկանց աչքումն ունէ մեծ նշանակութիւն: »

Էսպէս է խօսում ողջ Եւրոպայում յայտնի երեւելի բանկիրը, որը որ ի հարկէ աւելի լաւ է հասկանում, թէ առուտուրի և թէ փողի նշանակութիւնը, քան թէ որ և իցէ մէկ մասնաւոր վաճառական:

Բայց ինչի է մինչև էսօր ոսկին Եղպիսի մեծ նշանակութիւն ունենում առուտուրի մէջ: Ինչով են ոսկին ու արծաթը բարձր արժանաւորութենի տէր, քան թէ միւս մետաքները, կամ որ և իցէ դրամաթղթերը:

Երբ որ էս հարցերը առաջարկում ես քաղաքական տնտեսներին, նրանք փոխանակ մէկ ուղիղ պատասխան տալու, սխալ են պատմել թէ ինչքան տեղը ոսկին ու արծաթը թանկ են, հաղուաղիւտ են, պինդ են, չեն փչանում և էսպիսի յատկութիւններով աւելի բարձր են, քան թէ միւս մետաքները և դրամաթղթերը:

Բայց ոսկին ամենեւին էդ պատճառներով չէ տալել առուտուրի մէջ էն մեծ նշանակութիւնը: Ինչի են ամենքն ուրախութենով վեր առնում ոսկին ու արծաթը որ և իցէ ապրանք ծախելիս:

Ամենքը զիտեն, որ ոսկին ու արծաթը կրտսում են փողերանոց (մանետնի դօր) ասած գործարաններում: Էս տեղ առաջ քաշում են, իմանում են պրօբի ինչքանութիւնը, յետոյ կտրում են, այս ինքն կօլօլ ձև են տալիս, փող են շինում և վրէն դրում են զինը, պրօբի որքանութիւնը և վերջապէս թաղաւորութենի կնիքը (մուհրը): Կտրած փողը (ոսկին ու արծաթը) ոչ այլ ինչ է, եթէ ոչ տէրութենի կողմից երաշխաւորութիւն, որ էս ու էս մասնութը էսքան քաշ պրօբ և արժողութիւն ունէ: Էդ երաշխաւորութիւնը փողին իրաւունք է տալիս համարձակ բանիլ և ամեն առուտուրի մէջ փոխաւորութենի կշիռ ու չափ համարիլ: Մէկ կօսքով տէրութենի էդ երաշխաւորութիւնը փողին հրապարակական փոխ ու տուրսի նշանակութիւն է տալիս: Եթէ ոսկին ու արծաթը փող չլինէին, տէրու-

թենի ձեռով չկտրէին, վերջապէս եթէ փողը չունենար որոշած պրօբ, քաշ և տէրութենի երաշխաւորութենի կնիք, էն ժամանակը ոսկին ու արծաթը ոչ թէ փող կլինէր, այլ մէկ ապրանք, որ թէպէտ էլ ի բարձր զին կունենար, իբրև թանկագին ապրանք, բայց առուտուրի մէջ էլ փոխ ու տուրսի նշանակութիւն չէր ունենալ: Էն ժամանակը ոսկին իբրև ապրանք, ծախելիս՝ հարկաւոր կլինէր ամեն անգամ որոշել թէ պրօբը և թէ քաշը: Էդպէս անա ոսկին ու արծաթը փող են համարվում ոչ թէ էն պատճառով, որ երկար զիմացող, ազնիւ կամ թանկագին մետաքներ են, այլ միայն էնպէս, որ տէրութիւնները յանձնեւորեն են առել երաշխաւորութիւնը և էդպէսով տվել են ոսկուն էն մեծ նշանակութիւնը, որ ունէ նա առուտուրի մէջ: Կտրած փողը թէ ոսկէ և թէ արծաթէ—անանուն և անժամանակ վիկսիլ է, որի թէ պարտատէրը և թէ պարտականը կարող են լինիլ ամենքը, որովհետեւ տէրութենի հետ միասին մէկից առնելով և միւսին տալով երաշխաւոր են դառնում ամենքը, բոլոր հասարակութենի անդամները: Էդ հասարակութենի ընդունելութիւնն է, որ ամենքս ուրախութենով վեր ենք առնում ոսկին ու արծաթը:

Ա. Ե.

ՏՈՐՈՆԻ ԳՈՐԾԸ ԿՈՎԿԱՍՏՈՒՄՆ ԷՍ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄԸ:

1.

Տորոնը կովկասումը գլխաւորապէս կասպից ծալի մօտ գտնված գաւառներումն է դուրս գալիս—Վերբնդ, Ղուբա և էդ քաղաքների մօտ էլած տեղերումը: Հիմի էս վերջին 15 տարումը չափիցը դուրս շատ մարդ պարտաւեցաւ էդ գործով և 40,000 ղեսեաւորն աւելի հող տորոնով է ցանկում: Թէ մեծը, թէ փոքրը, թէ հարուստը և թէ աղքատը, տորոնի դարմանալի մեծ օգուտները աչքների առաջն ունենալով, հենց միայն տորոն ցանկելով էին պարագումը: 1850 թւից սկսած մինչև 1857 թիւը տորոնի զինը քիչ քիչ բարձրանում էր և կար ժամանակ, որ դրա զինը իրա տեղը փթին 12 մանէթին հասաւ: Էդ զինը շատ մեծ զին է, աչքներիս առաջն ունենալով էս հանգամանքները, որ մէկ ղեսեաւորն ղեսնի վրայ տորոն ցանկելով 5 տարից վրայ տէրը կարող է ստանալ դուր օգուտ 1000 մ., բոլոր ծախսերը դուրս եկած: Նշանակում է ուրեմն, որ մէկ ղեսեաւորն 4 տարի շարունակ տարին 250

մ. դուր օգուտ է տալիս տիրոջը: Ոչ մէկ երկրագործ մէկ ղեսեաւորն հողից չի կարող ստանալ էսքան օգուտ:

Բայց բանն էս է, որ անա 7-դ տարին է տորոնի գործի ձախ դնալը: Սրա պատճառները շատ պարզ են: Ամեն մարդ, թէ արհեստաւոր, թէ վաճառական և տորոնի մասին ոչինչ տեղեկութիւն չունեցողներ, աչքների առաջն ունենալով տորոնի խոստացած մեծ մեծ օգուտները, թողին իրանց բանքն ու գործը և ամենքն էլ տորոն սկսեցին ցանկել: Յանում էին ամեն տեղ, ուշք չդարձնելով, որ ամեն տեղ լաւ չի դուրս գալ տորոնը: Ահաղին փողեր էին վեր առնում դրանք ուրիշներից, մեծ մեծ շահեր տալով: Էս բաներն անում էին հենց էնպէս, որ կարծում էին թէ տորոնը բոլոր ծախսերը կծածկէ: Բայց սաստիկ սխալեցան էդ պարոնները:

Տորոնի զինն էլ վեր ընկաւ էն պատճառով, որ էդ գործով պարագողների շատանալուցը, շատ տորոն է դուրս գալիս կովկասումը և տորոնի գործ ձեռնդնեն էլ ինչպէս յայտնի է, բամբակի սակաւութենի պատճառով, վիչ տորոն են առնում, որովհետեւ քիչ բամբակեղէն ունին ներկելու նըրանք տորոնով: Յայտնի բան է, որ ոչ թէ 12 մ., այլ դրա կէսն էլ չեն տալ փթին:

Տորոնի զին վեր ընկնելու պատճառներից մէկն էլ կովկասի հիմիկայ տորոնի վատութիւնն է: Վատ է դուրս գալիս հիմի տորոնը, որովհետեւ հիմի շատ անաղին տեղեր են ցանկում տորոնով, առաջ շատ քիչ—և ի հարկէ պարզ բան է, որ քիչ հողին աւելի ուշք կարող է դարձնել տէրը, քան թէ մեծին և էն էլ ինչպիսի տէրը—էնպիսին, որ տորոն ասած բանը նոր է տեսնում:

Տորոնի մշակը առաջ օրը 22 կոպեկ էր նստում, հայն էլ հետը: Բայց հիմի հայով մշակը նստում է 40—45 կոպեկ:

Ուրեմն ինչ է հետևում մեր ասածներիցը: Տորոնի փողերը—մշակների վարձը երկու անգամ աւելացել է առաջվանից և որովհետեւ մէկ ղեսեաւորն հողը անկանոն ցանկելուցը, չի կարող էնքան տորոն տալ, քանի էլ առաջ էր տալիս, այլ երկու անգամ պակաս և էդ քիչ ստացած տորոնի զինն էլ վեր է ընկել—նշանակում է ամեն կողմից ծախվել է հիմի տորոնով պարագողների գործը:

Ինչ հետևանքներ ունեցաւ էս դրութիւնը: Առաջին, որ տորոնով պարագողները բանը իբրև ուղղելու համար, սկսեցին շատ տորոն ցանկել: Չափիցը դուրս շատ տորոն էր փորվում: Եւ ի հարկէ է, որովհետեւ շատ տորոնի հարկաւորութիւն չկար, զինն էլ պար-

րեմիտը իմ առաջ չատ անբարեմիտ կարող է համարվել, սերմն որոշել պարզ կերպով աղ- նին ու բարեմիտը՝ անաղնիս ու անբարե- միտը ոչ միայն դժուար այլ և աւելորդ է, որովհետեւ մեր կարծիքով անաղնիս ու անբարեմիտ համարվածները աւելի կարօտու- թիւն ունին մեր կարեկցութեանն և օգնու- թեանն, քան թէ առաջինները:

Արջ ամենայնի հարկաւոր ենք համարում ասել, որ մեր այժմեան բոլոր զբաղմունքի վը- րայ էլ տիրել է մէկ ընդհանուր ցաւ. եղ է հայերիս համար լեզու ստեղծել, չինել, կո- կել և սրա նման բաներ. էս բանը միակերպ ցանկութիւն է էլել բոլոր զրողները՝ Ման- դենեանց Տէր-Ստեփանից սկսած մինչև նոյն իսկ Պ. Նաղարեանցը: Հետեանք ի հարկէ էն է էլել, որ մենք թէ Մանդենեանցի և թէ Պ. Նաղարեանցի զրուածքները մէկ աւե- սակ դժուարացել ենք հատկանալ: Լեզուի վրայ փորձ փորձել—էս մեր ժամանակակից հայոց այս ու բնն զիտացողների ցաւն է և աւելորդ կորցրած ժամանակը:

Հիւսիսափայլի հետ հանդէս դուրս եկաւ դէմ առ դէմ ծուռը կլասիկական (էս անու- նին էլ արժանի չէ) ուղղութեամբ «Մեղու Հայաստանի» Մանդենեանց Տէր-Ստեփանի գաղելիք: Պատերազմը սկսվեցաւ: Բայց դա պատերազմ չէր: Հիւսիսափայլը կամենում էր Մեղուն այս ու բնն սովորցնել, Մեղուն էր այս ու բնը սատանայի հնարած էր կար-

* Մանօթիւթիւն: Մենք համաձայն չենք Պ. Ա. Ն. էն մտքին, թէ մեր լեզուն հիմնի կոնկրետ չէ և նրա վրայ փորձ փորձելը ա- լելորդ բան է: Ի հարկէ լեզու ստեղծելը, չի- նելը ցնորք է: Մենք էլ ընդդէմ ենք եղ բա- նին, իսկ թէ լեզուն պէտք է կոնկրէ կար- ծիք չկայ: Ժողովուրդն առաջ է դնում, լե- ղուն մշակվում է, ուրեմն և կոնկրտ է, կա- տարկադրովում է: Լեզուն հարստանում է մանաւանդ դաւառական բարբառների բա- ուերով ու ձևերով: Կանոնի տակ է հարկա- տը գցել դուրս ածված լեզուի ձևերը և ոչ թէ ինչպէս մէկ քանիսը մեղադրում անուամեն կա- նոններ հնարել չէլած ձևերի համար: Բայց թէ լեզուն կանոններ պէտք է ունենայ—կար- ծիք չկայ: Թէ Նաղարեանցը և նրա հետեղ- ները մեր լեզուն բաւական ծոմուցին իրանց հնարած կանոնների տակը դրելով մեր լեզուի ձևերը—էր մեր կարծիքով, նրանց մեր խօս- ված լեզուի սակաւ զիտանալուցն էր: Բայց թէ մեր խօսված լեզուի լաւ զիտացողները մեծ օգուտ կան, կիրկվեն և կհարստաց- նան լեզուն— կասկած չկայ:

Խմբագրող:

ծում: Պ. Առաքելաւ Արարատեանը (վարժա- պետը) Հիւսիսափայլի ճակատին էլած պատ- կերի խորտակեալ նաւիցը ու սօսիի ճիւղի- րիցն էլ աշխատում էր հայոց աղղի որ և իցէ պակասութիւն եւ բաւականէ: «Բոլորը սա- տանայութիւն է, ասում էր նա. ճշմարիտ մարդը ծառը ծուռը չի նկատել:» Բայց էն ժամանակակից խմբագիր և վարժա- պետ պարոնները հանդէս դուրս եկան Հիւսիսափայլի դէմ, զլիաւորապէս Մեղուի մէջ և յետոյ միւս դրա նման ծուռն ու- նեցող հանդէսների մէջ, ինչպիսի էին ճը- ուաքաղը, Համբաւաբերը և Մասեայ Աղա- նին: Հիւսիսափայլը ի հարկէ միայն ծիծա- ղում էր էն վայրի մաքրի վրայ, որոնցով լի- քըն էին յիշեալ ժողովների և դպրիւթների բոլոր նուամերները: Միմիայն մէկ քանի օրի- նաւոր, և էն էլ բարբառիկ պատահական կերպով, յօդուածներ երեւցան մեր էն ժա- մանակակից հանդէսների մէջ, բայց եղ բա- ները միակերպ յարձակմունքներ էին մի- այն լեզուի և բէֆորմ բառի վրայ: Էդպէս ահա Մեղուն մօտ հինգ տարի ոչ մէկ ուղ- ղութիւն, ոչ մէկ ինդիկ, ոչ մէկ նպատակ չունենալով, տարւում էր էն, ինչ որ ձեռն էր ընկնում. էսօր «վաքս չինելու» վրայ, վա- ղը «Շամիրամի վանում չինած ամբողջների մասին», մէկ օր լուսնիակի վրայ, միւս օրը Հոռլմայ Սրբոյն Պետրոսի կեղեցւոյ նկա- րազրութիւնը և էդպիսով ու ինչ դրել է և տվել—բոլորը տարվել է: Էդպէս մէկ քանի տարի շարունակելուց յետոյ Մեղուն անց կացաւ Պ. Սիմէոնեանցի խմբագրութեան տակը:

Ա. Ն.

ՄԱՍՆԱԻՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Վրաստանի վիճակից ընտրած պատգամաւորը: Էս ամսի 10-ին Ներ- սիսեան ուսումնարանումը ժողովիցան Թիֆ- լիսի կեղեցեբու և վրաստանի երեսփոխ- ները և ընտրեցին էս վիճակից պատգամա- տը Մտատակի Սովետիկ Յովհաննէս Լազա- րեան Ղայթմազիանցին և նրա կանգնատա Գովաոր Մէքայէլ Տէր-Գրիգորեանցին:

Ուսանողների համար ժողո- ված փողերը Թիֆլիսումը: Էս ամ- սի 8-ին մեր ղերասանները և ղերասանու- հները հայերէն թէատր ներկայացրին էն նպատակով, որ ժողոված փողերը ուսանող- ներին ուղարկեն: Հաւարվել է 300 մ. փող: Ի հարկէ շատ սակաւ Թիֆլիսի պէս քաղա- քի համար: Պարոն Ս. Տէր-Մկրտչեանցը իր

հանդուցեալ փոքր եղբայր Գրիգոր Տէր-Մը- կրտչեանցի համար սուրբ սեղան ունէր էս ամսին: Ընտել 8 կամ 10 հոգին ժողո- վեցին ուսանողների համար մօտ 500 մ., որոնց ցից 250 մ. փողը նուիրեց տան տէրը՝ Ս. Տէր-Մկրտչեանցը:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լճորոն Մայիսի 4.

Սնդիայի բանը բարձրացրուց իր դիւ- կանը մինչև 10%:

Սէրէնը, Կայնէյ և ընկ. առևտրա- կան տունը կուտարացաւ մօտ 100 միլիո- նով: Բիրժայի վրայ մեծ ահ ու դող է. ամեն օր բանկիրների կուտարանալու ձէներ են լսվում: Արվերպուլեյ համբաւ ստաց- վեցաւ, որ բամբակի ֆունտը 22 պէն- սից 12 պէնսի (փուլը մօտ 10 մանեթ.) վրայ ցած եկաւ: Շատ ֆարքիկաներ կողպ- վեցան: Սպասում են պատերազմին:

Պետերբուրգ Մայիսի 6.

Աուրսերը հետն ու հետը վեր են ընկ- նում. էր պատճառով բարաթ անողներ քիչ կան:

Լճորոնի վրայ երեք ամիս ժամանակով 26 1/2 պէնս:

Պարիժի վրայ . . . 270 պէնս:

Ռսկին . . . 7 մ. 85 կ.

Արծաթը մանեթը . . . 1 մ. 35 կ.

50% Լատարեյով առաջին փոխառու- թենի տոմսակները . . . 108 1/2 ման:

50% Լատարեյով երկրորդ փոխառու- թենի տոմսակները . . . 105 1/2 ման:

Թիֆլիս 1866 Մայիսի 21.

Բամբակի առուտուր թէպէտ չկայ, բայց երեանցի մէկ վաճառական էս օրե- րումը ծախեց մօտ 100 հալը բամբակ էն պայմանով, որ իր ծախսով ֆոթի հասցնելուց յետոյ փխին 9 մ. 40 կ. ստանայ:

Բուրդը —

Լեղալը —

Ինգլիզու շաքարը . . . 10 մ. 20 կ.

Ռսինը —

Արծաթը 72 պրօբի . . . 70 մ.

— 84 պրօբի . . . 300 մ.

Ռսկին 7 մ. 25 կ.